

1843 ԲԱԶՄԱՎԵՊ 1909

* ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ՀԱՏՈՐ
ԿԵ
ՑՈՒՅՈՒՄ
Բ. 1

ԱԳԹԱՅԻՆ - ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ՊԱՏՄԱԿԱՆ -

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ՝ ՊԱՏԿԵՐԱԿԱՐ ԱՄԱՐԵՐԻ

ԲԱԶՄԱՎԵՊԻ

ՍԻՐՈՑ ԵՒ ՄԱՂԹԱՆԱՑ ՈՂՋՈՑՆՆ ԵԲԸ

(1 յունիսար 1909)

Ողջո՞յն սիրոյ եւ մաղթանաց ԲԱԶՄԱՎԵՊԻ է որ կ'ուղիէ, Հայ Արա-
մուլի անդամներուն, Հայ թերթերուն, եւ Հայ որդւոց՝ որ փայլեցան ու
ցոլացին Հայրենիքի օճախիւն դուրս:

Ողջո՞յն ձեզի վտարանդի տպարաններ՝ որ լոյս եւ յոյս ծաւալեցիք՝
ասքմանազեան մեր հին զարմին էութեան մէջ:

Ողջո՞յն սիրոյ եւ յարգանաց ունիմ ձեզի Հայ Գրիշներ՝ Հայ մոռքերու
զարգացմանը ախոյժեաններ: Պանդխառութեան երկիրներու մէջ կանգնած՝
վտա զաներու շառաւակիներ թէ սփուեցիք չսրս բոլոր, եւ թէ մինչեւ ի
Հայաստան շատ շողջորուն նառագայիններ հասուցիք: Զեզմոլ մնաց
հշմարիս Հայն հաստատուն, ընդդէմ ամէն արհաւիրքի՝ անընկնելի,
անմըրկուն:

Ողջո՞յն ձեզի եւ մաղթանք բիւր՝ Հայ դպրութեանց սստարողներ.
դուք պէտք է որ յարատեւէք Հայրենիքի սիրոյ տենչը՝ թորգումական
սերուաններու ոգւոցը մէջ եռանդագին արձարձեւ: Գոչեցէք միշտ. —
ի՞նչ կայ վետմ եւ գեղեցիկ՝ քան բորբոքել Հայ ազգին մէջ յառաջա-
դէմ եւ լուսաւոր գաղափարաց նոխութիւն — :

* * *

Ե՞մ եմ ես ինքս, այս նինաւուրց վաստակաւորն մեր Հայրենի գրականութեան՝ որ ուխտելով Հայու կեանլին պահպանումն նուիրուի՛ զարգացուցի գործիչներ եւ ունեցայ որդեակներ՝ որոնք Մեծին Այսիթևարաց պարզած դրօշն ի ձեռին՝ գաղափարի առաքեալներ համոդիասցան լրջորէն:

Ամինկառոյց եւ յուսայից Ազատութեան արջալուսին ծագելուն, այս ինչ երէկ գրկեցի զայն ամրապնդ, ամայ պատօր նոր սկսայ՝ նոր եռամսդեամբ ժառացելու Ազգութեան:

Գեղ ալ կ'ուղրեմ հազար մաղթանք եւ բիւր աղեքս՝ Հայ Մսմուլ, ասկէ յետոյ դեռ աւելի լրջմուռթեամբ՝ դու քաղցրաբյոյ ծաղիկներու փունջերով՝ պեմազարդէ տաճարը՝ հայ դպրութեան։ Իմաստներու յորդնոխութիւն, մեղր գիտութեանց եւ մուռնդ, քեզմէ գտնեն՝ Հայ հոգիներն, Հայ մոքեն։

* * *

Ողջոյն ծեզի եւս սրտագին՝ Հայ դիւցագններ՝ որ քաջութեամբ Հայ անունը պանծացուցիք ազգերու մէջ։ Անմանութիւն կը մաղթեմ ծեզ, ո՞ն մարտիրոս ինկողներուդ, որ ստուգիւ ծեր սուբբ արեամբ Հայութիւնը փրկեցիք։

Զեզ եւս ողջոյն եւ քերմաջերմ մաղթանմներ, ով կամաւոր, անձնանուէր հայ մարտիկներ, այժմ յաղթական դուք որ կ'ապրիք՝ պէտք էք ըլլալ ուսիմիրաներ եւ քարոզիչք, սերտ միութեան, Հայ մոքերու գիտակցութեան զարգացման։

Ողջոյն ծեզի աշխարհասփիւր Հայորդիներ, որ Հայ կեանքը տագնախներէ ազատելու կը նգնիք։ Մալթանք ծեզի Հայ Մեկնասպ՝ որ Հայութեան Արհեստներու եւ Գեղեցիկ դպրութեանց սատարողներ կը լինիք, տվեալներու եւ որբերու հայրեր կ'ըլլաք անդադար եւ օրինութիւնն կ'ընդունիք դուք ամենքէն։

Շատ ողջոյններ, բարի կաղանդ եւ բիւր մաղթանք կ'ուղրեմ ծեզի Արմենակայ Թռոնիկներ՝ Նոր Տարուանս նոր օրով։ Տագնապներու շըրջաններէ նոր դուրս ելած՝ կ'ուղեմ ըլլալ ես մարգարէն Հայութեան։ Պիտի անցնի նգնաժամը Մասիմներու ստորոտէն։ Այրարատայ բարձանց վրայ Խաղաղութեան միթենին պիտի տեսնեն Արմէնները։ Տիգրաններու նաւասարդը պիտի տօնուի ինդտագին Հայաստանի ամէն կողմ։

Այս այն, բիւր բիւր մաղթանք եւ օրինութիւնք թողի Երկնքէն իջնեն ծեզի Հայորդիք։ Եւ Նոր Տարուանս Նոր Գարունը ուրախութեան եւ խնդութեան նոր Թուական ծեզ բանայ եւ թողի մնայ յակնտեան։

ՊԱՐԹԵՒԿ.